

Քոլեջի պլանավորման ուղեցույց
ծնողների և խնամակալների համար



Կալիֆորնիայի կարիերայի ռեսուրսների ցանց (CalCRN)

www.californiacareers.info

ՔՈՒԼԵԶԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն ուղեցույցը կօգնի Ձեզ և Ձեր աշակերտին Կալիֆորնիայում քոլեջ դիմելու վերաբերյալ պատկերացում կազմել և սկսել ծրագիր մշակել քոլեջի աստիճան ստանալու համար: Այս տեղեկատվությունն օգտակար է, անկախ այն բանից Ձեր աշակերտը նոր է ընդունվել ավագ դպրոց, թե ավարտական դասարանում է:

Այս ուղեցույցը կիրառեք որպես մեկնարկային կետ: Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք, օգնություն խնդրեք դպրոցի հոգեբան-խորհրդատուներից և ռեսուրսներ փնտրեք Ձեր աշակերտի դպրոցից, ձեր համայնքից և համացանցից:

Ցանկ

Այս փաստաթղթի որևէ բաժին անմիջապես այցելելու համար սեղմեք հղված անվանման վրա՝

- [Ձեր աշակերտին քոլեջի համար նախապատրաստելը](#)
- [Ճիշտ քոլեջի ընտրություն](#)
- [Քոլեջի տարբերակներ](#)
- [Քոլեջ ընդունվելու համար անհրաժեշտ դասընթացներ](#)
- [Քոլեջի ընդունելության քննություններ](#)
- [Ֆինանսական օգնության ռեսուրսներ](#)
- [Քոլեջի դիմում](#)
- [Քոլեջի մակարդակի մարզաձևերում մասնակցություն](#)

Քոլեջի կրթությունը կառուցվում է ավելի վաղ տարիներին ձեռք բերված գիտելիքների և հմտությունների հիման վրա: Յոթերորդ կամ ութերորդ դասարանում ժամանակն է քոլեջի հետ կապված պլաններ կառուցել: Ձեր աշակերտը պետք է սկսի դժվար, բայց հետաքրքիր դասընթացներ անցնել ուսումնական առարկաների վերաբերյալ և պարտավորվի սովորել այդ դասընթացները որքան հնարավոր է շատ:

Ավագ դպրոց ընդունվելիս Ձեր աշակերտին խորհուրդ տվեք՝

- բացահայտել իր հմտություններն ու հետաքրքրությունները,

- մասնակցել ծառայություններ մատուցող կազմակերպությունների եւ դպրոցական միջոցառումներին,
- կատարել կամավորական աշխատանքներ,
- ստաժավորում գտնել:

Այդ ընթացքում Ձեր աշակերտը կհանդիպի և կգրուցի մի շարք տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ:

Հավելյալ տեղեկատվության համար այցելե՛ք [California Career Center](#) (անգլերեն լեզվով կայքը):

ԱՅՈ՛Ղ, ՁԵՐ ԵՐԵՒԱՆ ԿԱՐՈՂ Է ՍՈՎՈՐԵԼ ՔՈԼԵՋՈՒՄ

ՁԵՐ ԱՇԱԿԵՐՏԻՆ ՔՈԼԵՋՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Քոլեջին պատրաստվելը գործընթաց է: Օգտագործեք այս ուղեցույցը, որպեսզի օգնեք Ձեր աշակերտին մնալ ճիշտ ուղու վրա:

Միջնակարգ դպրոց՝

- Ուսումնասիրեք A–G դասընթացների պահանջները և դժվար դասընթացներ անցեք, որպեսզի նախապատրաստվեք ավագ դպրոցում քոլեջի նախապատրաստական դասընթացներին:
- Ընտրեք գիտության, մաթեմատիկայի և համաշխարհային լեզվի դասընթացներ, որպեսզի լավ հիմք ունենաք:
- Ջարգացրեք Ձեր տաղանդը երաժշտության, սպորտի, թատերագիտության, խոսքի կամ այլ գործունեության միջոցով:

- Սկսեք բացահայտել ավագ դպրոցներ, քոլեջներ և գործունեության բնագավառներ Կալիֆորնիայի Կարիերայի Կենտրոնում (California Career Center)՝ այցելելով www.calcareercenter.org կայքը:

9-րդ դասարան՝ **9-րդ դասարանի աշակերտ**

- Ավագ դպրոցի համար դպրոցի հոգեբան- խորհրդատուի կամ խորհրդատուի հետ դասընթացներ պլանավորեք:
- Ներառեք A-G բոլոր հնարավոր դասընթացները յուրաքանչյուր դասարանի մակարդակի համար:
- Հետազոտեք քոլեջի ընդունելության պահանջները մի շարք քոլեջների համար:
- Օգտագործեք «Կալիֆորնիայի Կարիերայի Գոտի»- ն www.cacareerzone.org կայքում, որպեսզի բացահայտեք գործունեության բնագավառի նպատակները:
- Մասնակցեք արտադասարանային աշխատանքներին՝ դպրոցում կամ համայնքում:
- Սկսեք ինքնակենսագրական կազմել և այն միշտ թարմացրեք:

10-րդ դասարան՝ **10-րդ դասարանի աշակերտ**

- Հանձնեք Preliminary Scholastic Aptitude Test (PSAT)-ը հոկտեմբերին, երբ առաջարկվում է դպրոցի կողմից, անհրաժեշտության դեպքում խնդրեք վճարից ազատման փաստաթուղթ: Ամառն օգտագործեք քննությանը պատրաստվելու համար:
- Սկսեք մասնակցել ծրագրի առավել խորացված ուսուցման և գերազանցության դիպլոմի համար դասընթացներին:
- Շարունակեք ուսումնասիրել գործունեության բնագավառի և քոլեջի տարբերակներ: Տարվա ընթացքում քոլեջներ այցելեք:
- Առաջատարի դեր ստանձնեք արտադպրոցական կամ համայնքային խմբերում:
- Ստեղծեք էլեկտրոնային հասցե քոլեջ դիմելիս օգտագործելու համար: Ստեղծեք մականուն, որը լավ տպավորություն կթողնի:

11-րդ դասարան՝ **11-րդ դասարանի աշակերտ**

- Հանձնեք ACT, Scholastic Aptitude Test (SAT) Reasoning, և SAT թեստերը (որոնք պահանջում են որոշ քոլեջներ) տասնմեկերորդ դասարանի գարնանը:

- Կողմնորոշվեք քոլեջի ընտրության հարցում: Հաշվի առեք ծրագրերը, արժեքը, մեծությունը և գտվելու վայրը:
- Սկսեք աշխատել քոլեջի ծրագրերի վրա, ինչպիսիք են պատի թերթը և քոլեջ ընդունվելու նպատակը նկարագրող համառոտ շարադրությունը:
- Սկսեք կրթաթոշակի և ծառայությունների համար տրվող պարգևատրման որոնումները: Խոսեք ավագ դպրոցի խորհրդատուի հետ:

12-րդ դասարան՝ ավարտական դասարանի աշակերտ

- Նախքան ավարտական դասարանն սկսելը ճշտեք քոլեջի համար դիմում ներկայացնելու վերջնաժամկետները: Խորհե՛ք վաղ դիմելու լավագույն ընտրության շուրջ, եթե նրանք ունեն վաղ որոշման տարբերակ:
- Հանձնեք ACT, SAT Reasoning Tests և SAT Subject թեստը, եթե անհրաժեշտ է, ևս մի վերջին անգամ, մինչև դեկտեմբեր:
- Համոզվեք, որ քոլեջ դիմելու համար բոլոր պահանջվող տարրերն առկա են դիմումի փաթեթում, նախքան այն կներկայացնեք քոլեջ: Որոշ քոլեջներ կամ քոլեջի ծրագրեր պահանջում են շարադրություններ կամ ուսուցիչների կողմից տրված երաշխավորագրեր: Ճշտե՛ք քոլեջից և ծրագրով զբաղվող գրասենյակից, թե արդյոք շարադրություն և/կամ երաշխավորագրեր պահանջվո՞ւմ են:
- Դիմումները ներկայացրեք վերջնաժամկետից մի քանի օր առաջ, եթե առկա են խնդիրներ:
- Ճշտեք, թե ֆինանսական աջակցության ի՞նչ ձևաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել և դրանց վերջնաժամկետները:
- Ֆինանսական աջակցության համար ձևաթղթերը ներկայացրեք վերջնաժամկետից որքան հնարավոր է շուտ կամ գոնե վերջնաժամկետից մի քանի օր առաջ:
- Քոլեջի ընդունելության և ֆինանսական աջակցության հետ կապված նամակների համար գարնանն ստուգեք էլեկտրոնային հասցեն:

[Վերադարձ դեպի ցանկը](#)

ՔՈՒԼԵՋԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Կալիֆորնիայի բնակիչները հաջողակ են, քանի որ ունեն բազմաթիվ ուսումնական հաստատություններ, որոնք առաջարկում են կրտսեր մասնագետի և բակալավրի աստիճաններ: Ահա որոշ ընդհանուր տեղեկություններ Կալիֆորնիայի քոլեջների և համալսարանների վերաբերյալ՝ քոլեջի ուսումնասիրության գործընթացը սկսելու համար:

California Community Colleges

Տեղեկատվության համար այցելեք www.cccco.edu կայքը, իսկ դիմելու համար՝ www.cccapply.org կայքը:

Կալիֆորնիայի համայնքային քոլեջի (California Community College) համակարգը բարձրագույն կրթություն տրամադրող աշխարհի խոշորագույն համակարգն է, որն սպասարկում է քոլեջի 112 մասնաճյուղերի ուսանողների: Ուսանողները կարող են աշխատել կրտսեր մասնագետի աստիճան (երկամյա) ձեռք բերելու հետ համատեղ հարյուրավոր ուսումնական և տեխնիկական ոլորտներում, ինչպիսիք են առողջապահական և բարձր տեխնոլոգիաների հետ կապված մասնագիտությունները: Ուսանողները նաև կարող են կուրսային աշխատանք գրել, որը նրանց հնարավորություն կընձեռի տեղափոխվել քոլեջ կամ համալսարան՝ բակալավրի աստիճան ձեռք բերելու համար:

The California State University

Տեղեկատվության համար այցելեք calstate.edu/, իսկ դիմելու համար՝ www.csumentor.edu կայքերը:

Կալիֆորնիայի պետական համալսարանի (California State University) (անգլերեն լեզվով հայտնի է որպես CSU) համակարգը բակալավրի և մագիստրոսի ծրագրերի համար դիմած ուսանողներին առաջարկում է կրթություն հումանիտար, բնագիտական, կիրառական ոլորտում և այնպիսի մասնագիտություններ, որոնք ներառում են ուսուցում, բուժքույրական գործ, սոցիալական աշխատանք և ճարտարագիտություն: Ուսանողները կարող են ընտրել CSU-ի 23 մասնաճյուղերից 1-ը: Յուրաքանչյուր մասնաճյուղ եզակի է իր տեղանքով, մեծությամբ, ուսուցման ծրագրով և այլ առանձնահատկություններով:

The University of California

Տեղեկատվության համար այցելեք universityofcalifornia.edu/, իսկ դիմելու համար՝ admission.universityofcalifornia.edu/ կայքերը:

Կալիֆորնիայի համալսարանը (University of California) (անգլերեն լեզվով հայտնի է որպես UC) առաջարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսուցում մի շարք ոլորտներում: Ուսանողները կարող են UC-ի միջոցով մասնագիտանալ առաջարկվող հարյուրավոր ծրագրերից որևիցե մեկում: Չնայած բոլոր մասնաճյուղերն ունեն բակալավրիատի ընդունելության համար միևնույն պահանջները, սակայն դրանք տարբերվում են մեծությամբ, ընդգրկվածությամբ և առաջարկվող ուսումնական ծրագրերով: UC-ի մասնաճյուղերը տեղակայված են և՛ գյուղական և՛ քաղաքային տարածքներում ողջ նահանգի տարածքով մեկ և ընդգրկում են 5000-35000 ուսանող:

Անկախ հաստատություններ

www.aiccu.edu/

Կալիֆորնիայի Քոլեջների և Համալսարանների Անկախ Ասոցիացիան (AICCU) ներկայացնում է Կալիֆորնիայի 75 մասնավոր, ոչ-շահութաբեր քոլեջներ և համալսարաններ: Այս քոլեջները և համալսարանները տարբերվում են մեծությամբ՝ մեծ հեղինակավոր համալսարաններից մինչև փոքր հումանիտար քոլեջներ և մասնագիտական դպրոցներ: Ուսանողները կարող են այս դպրոցներից շատերում սովորելու համար դիմել՝ օգտագործելով տարածված դիմումի ձևը www.commonapp.org կայքում:

Այլ նահանգի քոլեջ հաճախելը

nces.ed.gov/collegenavigator/

Մի՛ վախեցեք ուսումնասիրել այլ նահանգում քոլեջ հաճախելու տարբերակը: Այն, որ այլ նահանգում քոլեջ հաճախելը չափազանց թանկ է, առասպել է, իրականում արժեքը կարող է լինել համեմատելի կամ նույնիսկ ավելի ցածր, քան տվյալ նահանգի քոլեջներում: Տեսե՛ք Western Undergraduate Exchange-ը (WUE) <http://wiche.edu/wue> կայքում, որպեսզի ուսումնասիրեք հնարավորինս ցածր ուսման վարձերի արժեքները:

ՔՈՒԼԵԶԻ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կան շատ դպրոցներ, որոնք կարող են հարմար լինել Ձեր աշակերտին: Բայց ինչպե՞ս որոշել, թե ո՞րն է ամենից հարմարը: Որքան շուտ բացահայտեք հավանական դպրոցները և

ընդունելության պահանջները, այնքան ավելի լավ: Հետևյալ քայլերը կօգնեն ուղղորդել Ձեր աշակերտին քոլեջի ընտրության գործընթացում:

Քայլ 1-ին. Նախքան կսկսեք քոլեջում սովորել որոշեք կարիերայի նպատակը

Պարզապես քոլեջ հաճախելը կարող է մեծ փորձառություն լինել Ձեզ համար, սակայն ավելի լավ է ունենալ վերջնական նպատակ, թե ինչպես այն կապահովի Ձեր կարիերայի հաջողությունը: Աշակերտները պետք է բացահայտեն կարիերայի նախնական նպատակը և կատարեն քոլեջի ընտրությունը, որը կօգնի մուտք գործել այդ ոլորտ: «Կալիֆորնիայի կարիերայի գոտի»-ն, որի կայքն է www.cacareerzone.org, կարիերայի բացահայտման հոյակապ վայր է:

Քայլ 2-րդ. Նախապատրաստվել

Ավագ դպրոցից հետո կա՛մ Կալիֆորնիայի Պետական Համալսարան, կա՛մ Կալիֆորնիայի Համալսարան հաճախելու համար աշակերտները պետք է հանձնեն A–G հերթականությամբ դասընթացները: Այս դասընթացները նաև կնախապատրաստեն աշակերտներին բազմաթիվ անկախ քոլեջներ և համալսարաններ ընդունվելու համար: Աշակերտները նաև պետք է քոլեջի ընդունելության քննություններ հանձնեն (ինչպիսիք են ACT, SAT, կամ Test of English as a Foreign Language [TOFEL]):

Քայլ 3-րդ. Այլ անձանցից խորհուրդ հարցրեք

Ավագ դպրոցի հոգեբանները և ուսուցիչները կարող են քոլեջի վերաբերյալ տեղեկատվության հուսալի աղբյուրներ լինել: Ձեր աշակերտին խորհուրդ տվեք քննարկել կարիերայի բացահայտման իրենց արդյունքները (լրացված Կարիերայի գոտի <http://www.cacareerzone.org/> կայքում), որպեսզի խորհուրդ ստանան, թե որ քոլեջն է նրանց համար լավագույնը: Խրախուսեք Ձեր աշակերտին խորհրդով դիմել կարիերայի այն ոլորտի մասնագետներին, որտեղ նրանք հույս ունեն մուտք գործել:

Քայլ 4-րդ. Տեղեկացեք ավելին քոլեջների մասին

Որքան ավելի շատ տեղեկություններ հավաքեք Ձեր աշակերտին հետաքրքրող քոլեջների մասին, այնքան ավելի մեծ է մտածված որոշում կայացնելու հնարավորությունը: Սկսեք տեղեկություն հավաքել այցելելով «Բացահայտել քոլեջներ» <https://secure.californiacolleges.edu> կայքում:

Քայլ 5-րդ. Նախնական ցուցակ կազմեք

Կազմեք հետաքրքրող 8-10 քոլեջների նախնական ցուցակը: Այս դպրոցներից յուրաքանչյուրից տեղեկատվություն ստացեք: Բաժանեք այս ցուցակը երեք կատեգորիաների՝

մեկը՝ Ձեր աշակերտը ԳԻՏԻ, որ կարող է ընդունվել, մյուսը՝ կարող է ՄԻ ԿԵՐՊ ընդունվել, և հաջորդը՝ Ձեր աշակերտը համոզված չէ, որ կարող է ընդունվել, ՍԱԿԱՅՆ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է: Ձեր աշակերտի համար ճիշտ քոլեջ ընտրելու վերաբերյալ առավել տեղեկատվություն գտնելու համար այցելեք՝

Ո՞րն է ինձ համար ճիշտ ընտրված քոլեջը հետևյալ կայքում՝

<https://www.calcareercenter.org/Home/Content?contentID=196>

Քոլեջի ընտրության հարցում Ձեզ աջակցող աղբյուրները՝

<https://www.calcareercenter.org/Home/Content?contentID=197>

Քայլ 6-րդ՝ Այցելեք քոլեջներ

Հավանաբար քոլեջի մասին առավել տեղեկանալու լավագույն տարբերակը մասնաճյուղ այցելելն է: Եթե հնարավոր է պլանավորեք քոլեջ այցելել ուսումնական տարվա ընթացքում, երբ դասերը շարունակվում են: Քոլեջների մեծ մասը կազմակերպում են տուրեր դեպի մասնաճյուղեր և ապահովում են գիշերակացը մասնաճյուղի բնակարաններում, եթե նախապես պայմանավորվել եք:

Քայլ 7-րդ. Ավարտին հասցրեք Ձեր ցուցակը և ներկայացրեք դիմումները

Երբ Ձեր աշակերտը տեղեկատվություն է հավաքել, այցելել է մասնաճյուղեր և խոսել է այլ անձանց հետ, յուրաքանչյուր կատեգորիայում քոլեջների քանակը նվազեցրեք 1-3: Քոլեջների միջին քանակը, որոնց պետք է դիմեք 5-6 է: Եթե դիմում եք այլ նահանգում գտնվող քոլեջներ, ավելացրեք ներկայացվող դիմումների քանակը մինչև 8-11: Սկսեք դիմումների ներկայացման վերջնաժամկետների օրացույց կազմել: Տեղեկացե՛ք, թե որ քոլեջներն ունեն *Վաղաժամ որոշման* և *Վաղաժամ ընդունելության* տարբերակներ: Յուրաքանչյուր քոլեջի վերաբերյալ պահեք փաստաթղթի թղթե պատճենը, որպեսզի ամեն ինչ իր տեղում լինի:

Քայլ 8-րդ. Որոշում կայացրեք

Ընդունելության վերաբերյալ նամակն ստանալուց հետո վերջին քայլը «մեծ» որոշում կայացնելն է, այն է՝ աջակցել Ձեր աշակերտին ընտրելու այն քոլեջը, որը նա պետք է

հաճախի: Քուլեջների վերաբերյալ ծանուցումների «համընդհանուր» վերջնաժամկետը մայիսի 1-ն է, սակայն Դուք ստիպված կլինեք ավելի վաղ որոշում կայացնել, եթե ընտրել եք *Վաղաժամ որոշման* կամ *Վաղաժամ գործողության* տարբերակը: Առաջարկն ընդունելուց հետո քայլեր ձեռնարկեք գրանցվելու և բնակարանային հարցերի ուղղությամբ: Մի՛ ուշացրեք վերջնաժամկետները:

[Վերադարձ դեպի ցանկը](#)

ՔՈՒԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

A–G դասընթացներ, որոնք պահանջվում են Կալիֆորնիայի Հանրային Համալսարանի համակարգերի կողմից (CSU-ի կամ UC-ի մասնաճյուղեր ընդունվելու համար աշակերտները պետք է բավարարեն Կալիֆորնիայի ավագ դպրոցի ավարտական նվազագույն պահանջները և քանի դեռ ավագ դպրոցում են՝ A–G դասընթացների պահանջները: Աշակերտները նաև պետք է բավարարեն իրենց տեղի դպրոցի ավարտական պահանջները և յուրաքանչյուր դասընթացի համար վաստակեն «C» կամ ավելի բարձր գնահատական:

՝ A–G դասընթացների պահանջվող նվազագույն քանակը հետևյալն է՝

(ա) Պատմություն/Սոցիոլոգիա՝ երկու տարի* (ԱՄՆ պատմություն, համաշխարհային պատմություն)

(բ) Լեզվական արվեստ (անգլերեն)՝ չորս տարի

(գ) Մաթեմատիկա՝ երեք տարի (հանրահաշիվ՝ 1, երկրաչափություն, հանրահաշիվ 2 նվազագույնի սահմաններում)

(դ) Գիտություն (լաբորատորիա)՝ երկու տարի պարտադիր, խորհուրդ է տրվում երեք տարի, կենսաբանություն, քիմիա և ֆիզիկա

(ե) Օտար լեզու՝ երկու տարի պարտադիր (խորհուրդ է տրվում միննույն լեզվով)

(զ) Կերպարվեստ և կատարողական արվեստ՝ մեկ տարի

(Է) Քոլեջի նախապատրաստում՝ ընտրովի

*Կալիֆորնիա նահանգում որպես ավարտական համարվում է նվազագույնը երեք տարին:

Դուք կարող եք գտնել Ձեր ավագ դպրոցի հաստատված A–G դասընթացների ցանկը «UC Doorways»-ում՝ այցելելով հետևյալ կայքը՝

www.ucop.edu/doorways/:

CSU և UC երկու համակարգերն էլ տրամադրում են ավելի շատ մանրամասներ ընդունելության և ավագ դպրոցի առարկաների համար ներկայացվող պահանջների վերաբերյալ: Այս ռեսուրսները կան համացանցում՝ հետևյալ կայքերում՝

CSU: www.csumentor.edu/Planning/high_school/subjects.asp

UC: www.ucop.edu/agguide/

Միշտ ճշտեք ցանկացած քոլեջի պահանջները, որը Ձեր աշակերտը ի նկատի ունի՝ այցելելով քոլեջի վեբկայքը: Եվ հիշեք, քոլեջի ընդունելության նվազագույն պահանջը ավագ դպրոցի ավարտական դիպլոմն է, այնպես որ համոզվեք, որ Ձեր աշակերտը գիտակցում է թե ինչ է պահանջում տեղի դպրոցը դիպլոմ ստանալու համար: Ձեր աշակերտին տեղեկացրեք որ միջին որակական գնահատականը (ՄՈԳ) (անգլերեն հայտնի է որպես GPA) կարող է հիմնական գործոն հանդիսանալ քոլեջ կամ համալսարան դիմելիս և նրանք պետք է փորձեն հնարավորինս բարձր ՄՈԳ-ով ավարտել, որպեսզի ավելի շատ քոլեջների տարբերակներ ունենան:

[Վերադարձ դեպի ցանկը](#)

ՔՈԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քոլեջ դիմող աշակերտները պետք է տեղյակ լինեն տարբեր քննություններից, որոնք կիրառվում և/կամ պահանջվում են այն քոլեջներում, որոնք նրանք նկատի ունեն: Ցանկալի է, որ աշակերտները սկսեն նախապատրաստվել այս քննություններին ավելի վաղ, իրենց ավագ դպրոցի կարիերայի ընթացքում:

Ավագ դայրոցից ճշտեք թեստի անցկացման օրվա, գրանցման վերաբերյալ տեղեկություններ, և այլն:

Նախապատրաստական քննություն

PSAT/National Merit Scholarship Qualifying Test (NMSQT) www.collegeboard.org

Այս թեստը տրվում է ամեն տարի հոկտեմբեր ամսին և նախատեսված է տասնմեկերորդ դասարանցիների համար, սակայն իններորդ և տասներորդ դասարանցիները նույնպես կարող են այն հանձնել: Տասնմեկերորդ դասարանի թեստի արդյունքները միակ արդյունքներն են, որոնք կարող են նկատի առնվել Արժանիքների համար տրվող Ազգային Կրթաթոշակի Որակավորման Թեստի համար (NMSQT): (Արժանիքների համար տրվող Ազգային Կրթաթոշակի ծրագիրը (The National Merit® Scholarship Program) ճանաչման և կրթաթոշակի համար անցկացվող օլիմպիադա է):

Քոլեջ դիմելու քննություններ

SAT Reasoning

www.collegeboard.org

SAT Reasoning թեստը ընտրության մի քանի տարբերակներով թեստ է, որը բաղկացած է ընթերցանության, մաթեմատիկայի և գրավոր խոսքի բաժիններից:

SAT Subject Tests

www.collegeboard.org

SAT Subject թեստերը մեկժամյա թեստեր են, որոնք նախատեսված են որոշակի առարկայի հետ կապված Ձեր գիտելիքների յուրացման մակարդակը որոշելու համար: Թեստերն առաջարկվում են հետևյալ առարկաներից՝ գրականություն, Միացյալ Նահանգների պատմություն, համաշխարհային պատմություն, մաթեմատիկա՝ 1-ին մակարդակ, մաթեմատիկա՝ 2-րդ մակարդակ, օտար լեզուներ և բնագիտություն: Ոչ բոլոր թեստերն են միևնույն ժամանակ առաջարկվում: SAT Subject թեստերը այլևս համընդհանուր կերպով պարտադիր չեն, սակայն դեռևս պարտադիր են որոշ ծրագրերի համար: Ստուգեք Ձեր նպատակային քոլեջների դիմումների պահանջները: Ստուգեք ընդունելության քննությունների հանձնաժողովի կայքէջը՝ գրանցման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, թեստերի օրերը և դրանց անցկացման վայրը ճշտելու համար: Շու՛տ գրանցվեք:

ACT

www.actstudent.org

ACT թեստը բաղկացած էն ընդհանուր կրթական պատրաստվածության չորս թեստից և ընտրովի գրավոր բաժնից, որը բաղկացած է հարցի այլընտրանքային պատասխաններից և գրավոր հուշումներից: Չորս հիմնական թեստերն են՝ անգլերեն, ընթերցանություն, մաթեմատիկա, գիտության հիմնավորում: Ուսումնական թեստերը տարածվում են անգլերենի կիրառության, մաթեմատիկայի, սոցիոլոգիայի և բնական գիտությունների վրա: Ճշտեք քոլեջ դիմելու պահանջները՝ պարզելու, թե արդյոք գրավոր բաժինն անհրաժեշտ է: Ի հավելումն թեստերի, ACT կայքէջը տրամադրում է հետաքրքրությունների որոշման համար հարցաթերթիկ և Ուսանողի հատկագրի բաժին: Ստուգեք ACT-ի կայքէջը՝ ճշտելու թեստերի անցկացման օրը, գրանցման և վճարների վերաբերյալ տեղեկությունները:

Անգլերենը որպես երկրորդ լեզու

Եթե Ձեր աշակերտը սովորել է Միացյալ Նահանգներում երկու տարուանից պակաս և նրա մայրենի լեզուն և Միացյալ Նահանգներում նրա դպրոցի դասավանդման լեզուն անգլերենը չի եղել, նա պետք է անգլերենի պրոֆեսիոնալ մակարդակ ցուցաբերի: Հավելյալ տեղեկատվության համար թող Ձեր աշակերտը խոսի դպրոցի հոգեբանի կամ խորհրդատուի հետ:

Հատուկ կրթական կարիքներով աշակերտներ

Հատուկ կրթական կարիքներով աշակերտները կարող են թեստավորման հարմարություններ պահանջել: Ձեր աշակերտը պետք է իր հոգեբանին կամ խորհրդատուին դիմի՝ այս առընչությամբ առավել տեղեկատվություն ստանալու համար: Կարևոր է այս գործընթացը վաղ սկսելը, որպեսզի գրանցման ժամկետի շրջանակներում հնարավոր լինի բավարարել փաստաթղթային պահանջները:

Վճարից ազատում

Ձեր աշակերտը պետք է գումար վճարի քոլեջի ընդունելության քննություններին մասնակցելու համար, սակայն, նրանք կարող են այս վճարներից ազատվել: Ուղղորդեք Ձեր

աշակերտին, որպեսզի նա վճարից ազատման տեղեկություն ստանա իր ավագ դպրոցի խորհրդատուից:

Հիշեցրեք Ձեր ավարտական դասարանի աշակերտներին

Քոլեջները և համալսարանները պահանջում են, որպեսզի ստանդարտացված թեստերը լրացված լինեն մինչև դեկտեմբեր, այնպես որ համոզվեք, որ Ձեր շրջանավարտը ճշտի թեստի անցկացման օրը և գրանցման վերջնաժամկետը:

[Վերադարձ դեպի ցանկը](#)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Քոլեջները ենթադրում են, որ ընտանիքը և աշակերտը քոլեջի համար կվճարեն:

Այնուամենայնիվ, շատ աշակերտներ քոլեջի գումարը վճարելու համար օգնության կարիք են ունենում: Ֆինանսական աջակցությունը, որը տրվում է աշակերտին քոլեջի վարձը վճարելու համար, կոչվում է «ֆինանսական օգնություն»: Դաշնային ֆինանսական օգնությունից օգտվելու իրավունակության համար Դուք և Ձեր աշակերտը պետք է լրացնեք «Ուսանողի դաշնային օգնության» անվճար դիմումը (անգլերենով հայտնի որպես FAFSA): Շատ քոլեջներ նաև պահանջում են ներկայացնել «Քոլեջի կրթաթոշակային ծառայություն» (անգլերենով հայտնի որպես CSS) ՀՍԿԱԳԻՐԸ: Բացի այդ, Կալիֆորնիայի հատուկ օժանդակությունը հասանելի է Կալիֆորնիայի ուսանողական օգնության հանձնաժողովի միջոցով:

Տեղեկատվության և աջակցության համար Ձեր աշակերտը պետք է ճշտի ավագ դպրոցի խորհրդատուից կամ քոլեջի ֆինանսական աջակցության գրասենյակից ի հավելումն հետևյալ առցանց աղբյուրների՝

Անվճար դիմում Դաշնային ուսանողական օգնության համար
www.fafsa.ed.gov
1-800-4-FED-AID (1-800-433-3243)
TTY 1-800-730-8913

Կալիֆորնիայի ուսանողական օգնության հանձնաժողով
www.csac.ca.gov
888-294-0148 or 916-526-8989
TTY (916) 526-8988

Pell Grant-եր և այլ դաշնային ծրագրեր
Դաշնային ուսանողական օգնության տեղեկատվական կենտրոն
studentaid.ed.gov/
1-800-4-FED-AID (1-800-433-3243)
TDD 1-800-730-8313

Քոլեջի կրթաթոշակային ծառայության (CSS) ՀՍԿԱԳԻԲ
<http://student.collegeboard.org/css-financial-aid-profile>
Համոզվեք, թե արդյոք դպրոցները, որոնց համար Դուք դիմում եք Քոլեջի
կրթաթոշակային ծառայության (CSS), հատկազիր պահանջում են:

Հավելյալ օգտակար կայքեր համացանցում (կայքերն անգլերեն լեզվով են)
Օգնում են լրացնել FAFSA-ն՝ <http://studentaid.ed.gov/resources#fafsa>
Ֆինանսական օգնության վերաբերյալ տեղեկատվական էջ՝ www.finaid.org
Արագ ինտերնետ՝ www.fastweb.com
Ձեր ապագայի պլանավորումը՝ <http://mappingyourfuture.org/>

Փնտրեք դպրոցի կամ տեղական գրադարանի կողմից առաջարկվող ֆինանսական օգնության
վերաբերյալ սեմինարներ:

***ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Օրինական ֆինանսական օգնության ծրագրերը դիմումների և
նյութերի համար գումար չեն գանձում:***

[Վերադարձ դեպի ցանկը](#)

ՔՈԼԵՋԻ ԴԻՄՈՒՄ

Ահա սովորական քոլեջի դիմումի պահանջների ցանկը: Հատուկ պահանջների համար
ստուգեք քոլեջի ընդունելության հարցերով գրասենյակի կայքէջերը: Դուք կարող եք գտնել
College Application Tracking Chart **[Քոլեջ դիմելու գործընթացին հետևելու աղյուսակ]**
Կալիֆորնիայի կարիերայի կենտրոնում՝ այցելելով
<https://www.calcareercenter.org/Home/Content?contentID=406> կայքէջը:

Դիմումի ձևաթղթեր

Այս ձևաթղթերը կարող են լինել առցանց կամ տպագրված տարբերակով՝ կախված
դպրոց(ներ)ից, որի համար Դուք դիմում եք: Դուք կարող եք դիմել կոնկրետ կամ
Կալիֆորնիայի Համայնքային մի քանի քոլեջներ, UC և CSU մասնաճյուղեր՝ օգտագործելով
յուրաքանչյուր համակարգի առցանց դիմումը: Դուք կարող եք դիմել ավելի քան 400
մասնավոր քոլեջներ՝ օգտագործելով դիմումի տարածված տարբերակը: Ստուգեք մասնավոր
քոլեջի կայքէջերը՝ դիմումի տարբերակները և նախապատվությունները ճշտելու համար:
Քոլեջի դիմումների հղումները հետևյալերն են՝

- California Community Colleges www.cccapply.org
- California State University www.csumentor.edu/AdmissionApp/
- University of California admission.universityofcalifornia.edu/

- Private Colleges www.commonapp.org

Դիմումների վճարներ

Քոլեջի դիմումների վճարները տարբեր են, այնպես որ համոզվեք, որ տեղյակ եք այն դպրոցների վարձավճարներից, որոնք հետաքրքրում են Ձեր աշակերտին: Ճշտեք, թե արդյոք քոլեջներից որևէ մեկը վարձից ազատվելու տարբերակ ունի և արդյոք Ձեր աշակերտը համապատասխանում է վճարից ազատվելու պահանջներին:

Առաջադիմության թերթիկ

Առաջադիմության թերթիկը հանձնած դասընթացների և վաստակած գնահատականների արձանագրությունն է: Ձեր աշակերտը պետք է ավագ դպրոցի տնօրինությանը խնդրի իր առաջադիմության թերթիկը դպրոցի կողմից իր մասին տրվող տեղեկատվության հետ միասին ուղարկել անմիջապես այն քոլեջներ, որոնց նա դիմում է: Ձեր աշակերտին ուղղորդեք առաջադիմության թերթիկի խնդրանքով դիմել դպրոցի այն անձին, ով ձևակերպում է դրանք և ներառել այն քոլեջների վերաբերյալ տեղեկատվություն, որոնց նա դիմում է: Տասներկուերորդ դասարանի ավարտին, երբ ամփոփիչ գնահատականներն ուղարկված կլինեն, Ձեր աշակերտը պետք է ավագ դպրոցի տնօրինությանը խնդրի ամփոփիչ, պաշտոնական առաջադիմության թերթիկն ուղարկել այն քոլեջ, որը Ձեր աշակերտը որոշել է հաճախել:

Ընդունելության քննությունների միավորներ

Որոշ քոլեջներ պահանջում են կամ խորհուրդ են տալիս այնպիսի քննությունների միավորներ ինչպիսիք են SAT-ը կամ ACT-ը: Ստուգեք քոլեջի կայքէջերը, որպեսզի ճշտեք, թե արդյոք երկու քննություններն էլ պարտադիր են և մտածեք երկուսն էլ հանձնելու մասին: Այցելեք թեստավորող կազմակերպությունների կայքէջերը՝ գրանցման վերջնաժամկետների և վարձավճարների համար: Ճշտեք, թե արդյոք Դուք համապատասխանում եք վարձավճարից ազատվելու պահանջներին: Աշակերտները պետք է խնդրեն ընդունելության քննական հանձնաժողովին և/կամ ACT-ին միավորներն անմիջապես ուղարկել հավանական քոլեջներ:

Երաշխավորական նամակներ

Քոլեջները կարող են երաշխավորագրեր պահանջել ուսուցիչներից կամ այլ չափահաս անձանցից, ովքեր ճանաչում են Ձեր աշակերտին: Այս երաշխավորագրերը պետք է խնդրել վերջնաժամկետից բավական ժամանակ առաջ, որպեսզի երաշխավորագրի գրող անձը բավարար ժամանակ ունենա այն գրելու համար: Երաշխավորագրի գրող անձինք հնարավոր է, որ ցանկանան, որպեսզի Ձեր աշակերտն իրենց տրամադրի իր նվաճումների վերաբերյալ գրավոր համառոտագրություն, որը կօգնի նրանց երաշխավորագրի գրելիս: Խորհուրդ տվեք

Ձեր աշակերտին հարցնել դպրոցի հոգեբանին կամ խորհրդատուին դպրոցի ուսուցիչներից երաշխավորագիր խնդրելու գործընթացի վերաբերյալ:

Անհատական շարադրություններ

Անհատական շարադրությունները աշակերտի համար հնարավորություն են իրենց կերպարի և ուժեղ կողմերի վերաբերյալ ընդունելության պաշտոնատար անձանց առավել լավ պատկերացումներ հաղորդելու համար: Ձեր աշակերտներին խորհուրդ տվեք նախքան քոլեջ ուղարկելը ուշադիր սրբագրել իրենց շարադրությունները: Աշակերտներն իրենց շարադրություններում պետք է ազնիվ ու անկեղծ լինեն:

Լսումներ և փաթեթներ

Երաժշտական, արվեստի կամ թատերական ծրագրերի ղեկավարները հնարավոր է, որ ցանկանան տեսնել աշակերտների աշխատանքների նմուշները: Մա նշանակում է, որ հնարավոր է, որ լսումներ լինեն կամ անհրաժեշտություն լինի ուղարկել գեղարվեստական կարողությունները ցուցադրող փաթեթ կամ տեսաձայնագրություն՝ որպես դիմումի մի մաս: Խորհուրդ տվեք Ձեր աշակերտին երաժշտության, արվեստի կամ թատրոնի ուսուցչին դիմել խորհրդով:

Հարցազրույցներ

Եթե նույնիսկ ընդունելության համար հարցազրույց անհրաժեշտ չէ, Ձեր աշակերտի համար լավ միտք է հարցազրույց խնդրելը: Դա ցույց է տալիս մտադրության լրջությունը և հնարավորություն է ընձեռում ընդունելության գրասենյակից որևէ մեկի հետ կապ հաստատել:

[Վերադարձ դեպի ցանկը](#)

ՔՈՒԼԵԶԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ

Եթե Ձեր աշակերտը մարզիկ է և ցանկանում է մասնակցել քոլեջի մակարդակով մարզաձևերի, Դուք կարող եք նրան տալ հետևյալ խորհուրդը՝

- Որոշել առաջնահերթությունները՝ ուսումնական/կրթական ընտրությունները դարձնելով առաջնային:
- Դիմել քոլեջի բազմաթիվ բաժիններ՝ ներառյալ I, II, III և National Association of Intercollegiate Athletics (NAIA).
- Շուտ կապվել քոլեջների հետ և հետաքրքրություն ցուցաբերել թիմում խաղալու համար:
- Վստահաբար գրանցվել National Collegiate Athletic Association (NCAA)

- Eligibility Clearinghouse.
- Խնդրել դպրոցի տնօրինությանը պաշտոնական առաջադիմության ցուցակն ուղարկել NCAA Clearinghouse-ին:

Համապատասխանության չափորոշիչներ

National Collegiate Athletic Association

www.eligibilitycenter.org

National Association of Intercollegiate Athletics (NAIA)

www.playnaia.org/

Կալիֆորնիայի Համայնքային Քոլեջներ

Այն աշակերտները, ովքեր հետաքրքրված են Կալիֆորնիայի Համայնքային քոլեջում սպորտային միջոցառումների մասնակցելուն, պետք է ճշտեն քոլեջի մարզական հարցերով բաժնի հետ:

Համոզվեք, որ Ձեր աշակերտը ճշտում է ավագ դպրոցի մարզական հարցերով տնօրենի հետ, թե ինչ համապատասխանության կանոններ են կիրառվում նրանց նկատմամբ:

ՁԵՐ ԵՐԵՆԱՆ ԿԱՐՈՂ Է ՀԱՃԱԽԵԼ ՔՈԼԵՋ

Սկսեք հենց հիմա

Պատրաստված է Կալիֆորնիայի կրթական բաժնի Կալիֆորնիա կարիերայի ռեսուրսների ցանցում (California Career Resource) www.californiacareers.info կայքում:

Հատուկ շնորհակալություն Tulare վարչաշրջանի կրթական գրասենյակին՝ ծնողների և աշակերտների համար քոլեջի պլանավորման ինքնատիպ ուղեցույց ստեղծելու համար:

Ծանոթագրություն դպրոցների համար. Այս ուղեցույցը կարող է անհատականացվել Ձեր դպրոցի կամ շրջանի համար: Ավելացրեք գրաֆիկաներ, խմբագրեք բովանդակությունը, օգտագործեք ընտրված էջեր, ցանկացած բան, որը կարող է օգտակար ռեսուրս լինել Ձեր ծնողների և խնամակալների համար:

Լրացուցիչ ուսումնասիրության և պլանավորման աջակցության համար այցելեք Կալիֆորնիայի կարիերայի կենտրոնի՝ www.calcareercenter.org և Կալիֆորնիայի Կարիերայի Գոտու www.cacareerzone.org կայքէջերը: